ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

18.08.17թ. N 07/17.1/3695-17

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱԼՅԱ ՇՏՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Շտոյան

ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր դիմումի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017թ. փետրվարի 14-ին կայացրած <Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին> որոշմամբ առաջարկվել է ՀՀ Կոտայքի մարզպետին ձեռնարկել արդյունավետ և բավարար միջոցներ ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1361-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված գումարը համապատասխան որոշման հիման վրա Անահիտ Բաղդասարյանին վճարելու ուղղությամբ՝ հիմք ընդունելով վնասներն արձանագրած հանձնաժողովի ակտը: Վերը նշված որոշման պահանջը կատարելու նպատակով մարզպետարանը բազմիցս առաաջարկել է Եղվարդ համայնքի ղեկավարին ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N1582-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 11-րդ կետերի համաձայն ներկայացնել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համայնքային հանձնաժողովի ակտը՝ Անահիտ Բաղդասարյանին պատկանող պտղատու ծառերին ևս 2015թ. նոյեմբեր ամսին ուժեղ քամու հետևանքով պատճառված ենթադրյալ վնասի վերաբերյալ: Եղվարդ համայնքի ղեկավարը 2017թ. հուլիսի 18-ի N364 և հուլիսի 26-ի N373 գրություններով /կից ներկայացվում են/ հայտնել է, որ ծառերին պատճառված վնասի չափը հնարավոր չի եղել գնահատել, քանի որ ծառեր արդեն չեն եղել: Ելնելով նշվածից Անահիտ Բաղդասարյանի գույքին՝ /քարե պարիսպ/ պատճառված վնասի փոխհատուցման համար համայնքային հանձնաժողովի 2015թ. նոյեմբերի 14-ի ակտն է ներկայացվել արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական

հանձնաժողով ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N1582-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Հայտնում ենք, որ ՀՀ Կոտայքի մարզպետարանը իր իրավասության սահմաններում ձեռնարկել է հնարավոր անհրաժեշտ միջոցներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2017թ. փետրվարի 14-ին կայացրած որոշման պահանջների կատարման ուղղությամբ:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Լ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Իրավաբանական բաժին

((0223) 2-37-01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 21110, info@yeghvard.am,
yeghvard.kotayq@mta.gov.am

N 364
18 հուլիս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան.

Ի պատասխան Ձեր 20.06.2017թ. N 01/17.1/2668-17 գրության՝ հայտնում ենք, որ Եղվարդ համայնքում 2015 թվականի նոյեմբերի 13-ին ուժեղ քամու հետևանքով առաջացած վնասների գնահատման հանձնաժողովը իր ակտում չի ընդգրկել Մովսես Եղվարդեցու թաղամասի 4-րդ փողոցի թիվ 8 հասցեի վնասված պտղատու ծառերը, որովհետև դրանք գտնվելիս են եղել պատի փլվածքի տակ և տեսանելի չեն եղել: Կատարելով լրացուցիչ ուսումնասիրություն՝ հանձնաժողովը հիմք է ընդունել քաղաքացի Անահիտ Բաղդասարյանի լիազորված անձ Վալյա Շտոյանի հայտարարությունը այգում եղած պտղատու ծառերի վերաբերյալ, համաձայն որի այգում եղել են 10 հատ 5-7 տարեկան պտղատու ծառեր: Ուսումնասիրության արդյունքում հնարավոր չի եղել գնահատել ծառերի վնասի չափը դրամական արտահայտությամբ, քանի որ ծառեր արդեն չեն եղել:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. ՝ Վ. Մուրադխանյան

Հեռ. 0224 2-22-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 21110, info@yeghvard.am,
yeghvard.kotayq@mta.gov.am

N 373
26 հուլիս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան.

Ի պատասխան Ձեր 24.07.2017թ. N 01/17.1/3240-17 գրության՝ հայտնում ենք, որ Եղվարդ համայնքում 2015 թվականի նոյեմբերի 13-ին ուժեղ քամու հետևանքով առաջացած վնասների գնահատման հանձնաժողովը իր ակտում չի ընդգրկել Մովսես Եղվարդեցու թաղամասի 4-րդ փողոցի թիվ 8 հասցեի վնասված պտղատու ծառերը, որովհետև դրանք գտնվելիս են եղել պատի փլվածքի տակ և տեսանելի չեն եղել: Կատարելով լրացուցիչ ուսումնասիրություն՝ հանձնաժողովը հիմք է ընդունել քաղաքացի Անահիտ Բաղդասարյանի լիազորված անձ Վալյա Շտոյանի հայտարարությունը այգում եղած պտղատու ծառերի վերաբերյալ, համաձայն որի այգում եղել են 10 հատ 5-7 տարեկան պտղատու ծառեր: Ուսումնասիրության արդյունքում հնարավոր չի եղել գնահատել ծառերի վնասի չափը դրամական արտահայտությամբ, քանի որ ծառեր արդեն չեն եղել:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. ՝ Վ. Մուրադխանյան

Հեռ. 0224 2-22-04